



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
«ԱՐԱՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ»



Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«04» 07 2017թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 61

Ձեռնարկողը՝

«Գևելո» ՍՊԸ

«Սյունիքի մարզ, ք. Կապան,
Հ. Ավետիսյան 1/ա 46»

Գործունեությունը՝

Կապանի պղնձի հանքավայրի կենտրոնական հանքի նոր
տրանսպորտային հանքուղու ելքից հանքայնացված ջրի
երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների
նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ

«Սյունիքի մարզ»

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրեն՝



Վ. Սահակյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

թիվ ԲՓ 61

' 04 ' 07 2017թ.

Կապանի պղնձի հանքավայրի կենտրոնական հանքի նոր տրանսպորտային հանքուղու ելքից հանքայնացված ջրի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Պատվիրատու՝ <<Գևելո>> ՍՊԸ
Նախագծող՝ <<Գևելո>> ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝ Նախնական գնահատման հայտ
Գ կատեգորիա
Տեղադրման վայրը՝ <<Սյունիքի մարզ

Սյունիքի մարզ
Գևելո

Ըստ նախնական գնահատման հայտի՝ <<Սյունիքի մարզի Կապանի պղնձի հանքավայրի կենտրոնական հանքի նոր տրանսպորտային հանքուղու ելքից հանքայնացված ջրի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման ծրագիրը կազմված է <<Գևելո>> ՍՊ ընկերության նախաձեռնությամբ և ֆինանսական միջոցներով՝ հիմնվելով տեղամասում նախկինում կատարված ուսումնասիրության աշխատանքների արդյունքների վրա:

Նախատեսվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների՝ Կապանի պղնձի հանքավայրի տարածքը գտնվում է <<Սյունիքի մարզում, Կավարտ գետի միջին հոսանքի ավազանում, Կապան քաղաքից 3-4կմ հյուսիս-հյուսիս-արևմուտք, իր մեջ ներառելով մի շարք գործող և փակված հանքեր, հանքային տեղամասեր:

Ըստ նախնական գնահատման հայտի նախատեսվում է.

- իրականացնել նախկինում կատարված աշխատանքների տվյալների ուսումնասիրություն, վերլուծություն և մշակում,
- կատարել հանքարանային ջրի կահավորում /կապտած/,
- կատարել ռեժիմային դիտարկումներ և լաբորատոր ուսումնասիրություններ,
- կատարված աշխատանքների արդյունքներով կազմել երկրաբանական հաշվետվություն և ներկայացնել << Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ՕՀՊԳ-ի փորձաքննությանը:

Աշխատանքների կատարման ժամկետների սկիզբը նախատեսվում է 2017թ-ի II-րդ եռամսյակին և ավարտվելու է՝ 2019թ.-ի II-րդ եռամսյակին:

Մինչ ուսումնասիրության աշխատանքների սկսելը նախատեսվում է կահավորել Կապանի պղնձի հանքավայրի կենտրոնական հանքի նոր տրանսպորտային հանքուղու ելքը եռանկյունաձև ջրթափով՝ ռեժիմային դիտարկումները ապահովելու համար: Դրա



համար անհրաժեշտ կլինի մաքրել հանքայնացված ջրի մուտքը քարաբեկորների, խճի, ավազից և կավի բերվածքներից:

Կապանի նախկին ԼՀԿ-ի տարածքում գտնվող՝ ներկայումս Կապան քաղաքային համայնքի սեփականություն (հիմք՝ Անշարժ գույքի սեփականության /օգագործման/ իրավունքի գրանցման թիվ 2315488 վկայական) հանդիսացող, կոնսերվացված և փակված հանքավայրի կենտրոնական հանքի նոր տրանսպորտային հանքուղու ելքից արտահոսող հանքայնացված ջրերը տեղափոխելու է նմուշառման ուսումնասիրության տեղամաս: Տեղափոխությունը նախատեսվում է իրականացնել 330.0մ երկարության և 160մմ տրամագծով խողովակաշարի օգնությամբ՝ գոյություն ունեցող ջրահեռացման պատերին զուգահեռ: Ջրահեռացման առուն՝ հետևաբար նաև նախատեսվող խողովակաշարը, անցնում են բուսածածկույթից և քարաթափումներից զուրկ տարածքով, իսկ մոտ 60.0մ հատվածը Կապանի ԼՀԿ-ի տարածքով:

Հիդրոերկրաբանական ելակետային պարամետրեր ստանալու և կորզվող պղնձի պաշարներ գնահատելու համար նախատեսվում է հանքայնացված ջրերի ռեժիմային դիտարկումներ: Ռեժիմային դիտարկումները կիրականացվեն երկու տարվա տևողությամբ և ամսական երեք անգամ չափումների հաճախականությամբ, որը լիովին ապահովում է պաշարների գնահատումն արդյունաբերական B կարգով: Յուրաքանչյուր դիտակման ժամանակ չափվելու է ջրի ծախսը և ջերմաստիճանը՝ թվով 144 չափում: Ամիսը մեկ վերցվելու է ջրի նմուշ՝ 24 կրճատ քիմիական անալիզի, ինչպես նաև եռամսյակը մեկ անգամ՝ 8 նմուշ, ստուգողական անալիզի համար:

Բացի վերը նշվածից նախատեսվում է իրականացնել ջրի նմուշների լաբորատոր հետազոտություններ՝ ջրի որակական հատկությունները, այդ թվում Cu, Fe, Zn էլեմենտների քանակական պարունակությունը որոշելու համար:

Ռեժիմային դիտարկումների վերջին փուլում նախատեսվում է իրականացնել հանքայնացված ջրերից պղնձի փորձնական կորզում ըտրված տեխնոլոգիական տարբերակով նրա ինքնարժեքը և շահավետությունը որոշելու համար:

Կատարված հիդրոերկրաբանական ուսումնասիրություններից ստացված տվյալների և արխիվային նյութերի մշակումից, ամփոփումից հետո նախատեսվում է Կապանի պղնձի հանքավայրի կենտրոնական հանքի նոր տրանսպորտային հանքուղու հանքարանային ջրի պաշարների գնահատմամբ, համապատասխան տեքստային և գծագրական հավելվածներով կազմել ամփոփ երկրաբանական հաշվետվություն և ներկայացնել ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ՕՀՊԳ-ի փորձաքննության և հաստատման:

Արդյունքում կընտրվի Կապանի պղնձի հանքավայրի կենտրոնական հանքի նոր տրանսպորտային հանքուղու հանքայնացված ջրի համար պղնձի կորզման մեթոդիկա և կմշակվի օպտիմալ մաքրման սխեմա՝ հանքավայրի հանքայնացված ջրերի նախնական օգտագործմամբ:

Ընդհանրացնելով և վերլուծելով ներկայացված նախնական գնահատման հայտը, ՀՀ բնապահպանության նախարարության համապատասխան ստորաբաժանումներից ստացված կարծիքները, 20.06.2017թ. Կապանի քաղաքապետարանի տարածքում իրականացված հանրային քննարկումների արդյունքները, ինչպես նաև փորձաքննական գործընթացում առաջարկությունների և դիտողությունների հիման վրա կատարված լրամշակումները կարելի է անել հետևյալ եզրահանգումները.

Նախատեսվող երկրաբանական ուսումնասիրության արդյունքում հանքայնացված ջրերի մաքրումից հետո ակնկալվում է ստանալ թույլատրելի նորմերին համապատասխան ջուր, որը կարող է օգտագործվել տարբեր բնագավառներում որպես շրջանառու ջրի լրասնուցման աղբյուր և այլն:



Հանքայնացված ջրերի մաքրման սխեմայի մշակման ժամանակ նախատեսվել է դրանցում առկա առժեքավոր բաղադրիչների կորզման հնարավորությունը: Այս դեպքում, մաքրման գործընթացը դառնում է տնտեսապես ձեռնատու: Ըստ Կապանի պղնձի հանքավայրի կենտրոնական հանքի նոր տրանսպորտային հանքուղու ելքից հանքայնացված ջրի քիմիական անալիզի տվյալների՝ կատարված 1988թ.-ին, ջրի կոշտությունը կազմել է 40.0մգ-էկվ/լ, չոր մնացորդը՝ 6570.0մգ/լ, SO_4^{2-} - 4353.9մգ/լ, Cu - 94.0մգ/լ, Fe - 90.9մգ/լ, Zn - 39.0մգ/լ: Ամենամեծ հետաքրքրությունը ներկայացնում է պղինձը, որ պարունակությունը տատանվում է 55.0-160.0մգ/լ:

20.06.2017թ. Կապանի քաղաքապետարանի տարածքում իրականացված հանրային քնարկումների ժամանակ հանրության կողմից հնչեցին դրական կարծիքներ և հավանություն տրվեց նախատեսվող գործունեության վերաբերյալ: Նշվեց, որ ըստ նախնական գնահատման հայտի հանքայնացված ջրերի օգտագործումը հնարավորություն է տալիս կեղտաջրերի մաքրման սխեման դարձնել տնտեսապես արդյունավետ:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում խողովակաշարի անցկացման (հիմնականում ձեռքի աշխատանքի օգնությամբ) ժամանակ հնարավոր է անօրգանական փոշու արտանետումներ, իսկ շինարարական տեխնիկայի կիրառման դեպքում, նաև շարժիչների աշխատանքի արդյունքում դիզելային վառելիքի այրման արգասիքների արտանետումներ, որոնք կունենան ժամանակավոր բնույթ և կարտանետվեն հարթակային աղբյուրներից:

Աշխատանքների իրականացման ժամանակ անհրաժեշտ է հետևել բնապահպանական միջոցառումների կիրառմանը, որոնք ընդգրկում են հետևյալ հարցերը.

- օդային ավազանի պահպանումը վնասակար արտանետումներից,
- ջրային ավազանի պահպանումը կեղտոտումից,
- կանխարգելել կամ մեղմացնել էկոհամակարգերի վրա մարդածին բացասական ազդեցության գործոնը:

Երկրաբանական ուսումնասիրության համար ընկերությունը նախատեսում է ներդնել մոտ 2մլն.դրամ:

Նախնական գնահատման հայտում ներկայացված բնապահպանական միջոցառումների իրականացումը հնարավորություն կտա նվազեցնելու կամ մեղմելու իրականացվող աշխատանքների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, ինչպես նաև վերահսկելու նախատեսվող աշխատանքների գործընթացը: Նախատեսված միջոցառումների արդյունքում տարածքի աղտոտվածությունը՝ շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչներով, կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

1. Մինչ գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնություններ և թույլտվություններ (մասնավորապես՝ Կապանի ԼՀԿ-ի տարածքով մոտ 60.0մ խողովակաշարի հատվածի անցկացման և այլն):

2. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել բնապահպանական (մասնավորապես՝ տարածքում առկա ջրային /գետեր, աղբյուրներ/ ցանցը աղտոտումից զերծ պահելու և պահպանությանն ուղղված աշխատանքների իրականացումը) միջոցառումների և սոցալ-տնտեսական ծրագրի իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցից միջոցառումներ՝ պարտադիր կարգով պահպանելով բնապահպանական, կառուցման և շահագործման հետ կապված բոլոր նորմերը:



3. Գործունեության ընթացքում առաջացած շինարարի կուտակումը և հեռացումը (կենցաղային աղբ), ինչպես նաև ջրօգտագործումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Գևելո>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված <<Կապանի պղնձի հանքավայրի կենտրոնական հանքի նոր տրանսպորտային հանքուղու ելքից հանքայնացված ջրի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների>> շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ՝



Կ. Մովսիսյան